1121300	-Կոմունալ ծառայություններ		0		0	0	0	0	0
1121400	-Կապի ծառայություններ		280		280	45	100	150	280
1121500	-Սոցիալական փաթեթի շահառուների կասխարգելիչ բժշկական քննություն		0		0	0	0	0	0
1121600	-գույքի և սպրքավորումների վարձակալություն		0		0	0	0	0	0
Ա	Բ	գ							
1122000	2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր	x	20	0	20	0	0	0	20
1122100	-Ներքին գործուղումներ		20		20	0	0	0	20
1122200	-կրտսատահմանյան գործուղումների գծով ծախսեր		0		0	0	0	0	0
1122300	-Այլ տրանսպորտային ծախսեր		0		0	0	0	0	0
1123000	2.3 Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում	x	150	0	150	15	25	72	150
1123100	-վարչական ծառայություններ		0		0	0	0	0	0
1123200	-Հանձնագրագային ծառայություններ		100		100	15	25	72	100
1123300	-Աշխատավարձի մասնագիտական զարգացման ծառայություններ		0		0	0	0	0	0
1123400	-Տեղակատրվական ծառայություններ		0		0	0	0	0	0
1123500	-Կտրավարչական ծառայություններ		0		0	0	0	0	0
1123600	- Վեցնաղային և իանրային սննդի ծառայություններ		0		0	0	0	0	0
1123700	-Ներկայացուցչական ծախսեր		50		50	0	0	0	50
1123800	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		0		0	0	0	0	0
1124000	2.4 Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում	x	3600	0	3600	1200	1950	2680	3600

1124100	-Այսամբիտական ծախսերում	424100	3600		3600	1200	1950	2680	3600
1125000	2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծախսերումներ և ելքեր)	x	0	0	0	0	0	0	0
1125100	-Հենքերի և կառուցների ընթացիկ նորոգում և պահպանում	425100	0	0	0	0	0	0	0
1125200	-Լեքեմաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425200	0	0	0	0	0	0	0
1126000	2.6 Նյութեր	q							
1126100	-Չհամապատասխան նյութեր և հագուստ	x	3595	0	3595	1070	1628	2143	3595
1126105	-Տնտեսական սպորտընթացիկ	426100	150	150	150	100	0	0	150
500	-Չորսեր և սարքավորումներ	426200	95	95	95	0	0	95	95
1126110	-Չեղբայր և վերականգնող նյութեր	426300	0	0	0	0	0	0	0
1126300	-Վերականգնող նյութեր և ուսուցանող նյութեր	426300	2200	2200	2200	650	1078	1398	2200
1126400	-Տրանսպորտային նյութեր	426400	850	850	850	200	350	400	850
1126500	-Շրջակա միջավայրի պաշտպանության և փրկական նյութեր	426500	0	0	0	0	0	0	0
1126600	-Արտադրատեղի և լաբորատոր նյութեր	426600	300	300	300	120	200	250	300
1126700	-Կենցաղային և համրային սնունդ նյութեր	426700							
1126800	-Հատուկ նպատակային այլ նյութեր	426800							
1170000	3. ԱՅԼ ԾԱՆՏԵՐ	x	450	0	450	150	250	275	450
1172000	3.1 ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԾԵՐ, ՈՐՈՒՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵՐ ԵՎ ՄԱՐԿԱՎԱՐՄԱՆ ԿՈՐԻՑ ԿՈՐԿՐՈՒՄ ԵՆ ՄԻՆՅԱՆՆԵՐ ՆԿԱՏԱՍԱՐ	x	250		250	55	70	85	250
1172100	-Աշխատավարձի ֆոնդ	482100	0	0	0	0	0	0	0
1172200	-Այլ հարկեր	482200	0	0	0	0	0	0	0
1172300	-Պարտադիր վճարներ	482300	250	250	250	55	70	85	250
1172400	-Պետական հատվածի տարբեր մակարդակների կողմից միջանց նկատմանը վերադարձվող տույժեր	482400							
1175100	-Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում	485100							
1173000	3.2 ՊԱՏՆԱՐԱՆԵՐԻ ԿՈՐԻՑՆԵՐ ՆՇԱՆԱԿԱԿԱՏ ՏՈՒՅԾԵՐ ԵՎ ՏՈՒՎԱՆՔՆԵՐ	x	0	0	0	0	0	0	0
1173100	-Պատրաստների կողմից նշանակված տույժեր և տուգանք	483100	0	0	0	0	0	0	0
1176000	3.3 ԱՅԼ ԾԱՆՏԵՐ	x	200	0	200	120	170	190	200
1176100	-Այլ ծախսեր	486100	200	200	200	120	170	190	200
1177000	3.4 ՊԱՆՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	0	0	0	0	0	0	0
1177100	-Պահուստային միջոցներ	489100	0	0	0	0	0	0	0
1200000	Բ. ՈՇ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԾՈՎ ԾԱՆՏԵՐ	x							
1210000	1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x							
1211000	-Հենքերի և շինությունների ձեռք բերում	511100							
1212000	-Հենքերի և շինությունների կառուցում	511200							
1213000	-Հենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	511300							
1214000	-Տրանսպորտային սարքավորումներ	512100							
1215000	-Վարչական սարքավորումներ	512200							
1216000	-Այլ ձեռքբերումներ և սարքավորումներ	512900							
1217000	-Աճեցվող ակտիվներ	513100							

1218000	-Ոչ-մուտքային հիմնական միջոցներ	513200							
1220000	2.ՊԱՇՏՐՈՒՆԵՐ	x							
1221000	-Իրազնավարական պաշարներ	521100							
1222000	-Նյութեր և պարագաներ	522100							
1230000	3.ԲԱՐՉՈՒՄԻՆԻՔ ԱՎՏԻՎՆԵՐ	x							
1231000	-Բարձրարժեք ակտիվներ	531100							
1240000	4.ՈՉ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՎՏԻՎՆԵՐ	x							
1241000	-Հող	541100							
1244000	-Ոչ նյութական ոչ արտադրական ակտիվներ	544100							
1000000	ԸՆԴՈՒՄՆԵՐԸ ԾԱՆՄԵՐ	x	33966	0	33966	8505	13914	23511	33966

«26» դեկտեմբեր 2023 թ.

Քիմասրիկի ղեկավար _____ Գ. Առաքենյան
(ստորագրություն)

Չաշվապահ _____ Տ. Ապրիսյան
(ստորագրություն)

Կ.Տ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ք. Ալավերդի, Չորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ, N 130-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՇՆՈՂԻ
ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ
ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՑՈՒՑԱԿԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի՝

համայնքի ավագանին որոշում է.

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների գնացուցակը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 01-ից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՈՆՊԱՅ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՍԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՍԱՐԳԱՐՅԱՆ			

6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱԿԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՇՎԻԼԻ			
8.	ԱՄՐԱՍՏԱՆ	ԶԱՆԻՆՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽԿԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՅԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԱՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱԲՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈԿԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՉԱԽԱՐՈԿ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ԴԱԿԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ



2023թ., դեկտեմբերի 26,
Լոռու մարզ, ք. Ալավերդի



Գնացուցակ

<< ՇՆՈՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՍԲՈՒԼԱՏՈՐԻԱ >> ՀՈԱԿ -Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1	ԱԱՊ բժշկական հաստատություններում 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի բնակչության համար վճարովի հիմունքներով իրականացվող ծառայություններ	
➤	Վերքերի առաջնային վիրաբուժական մշակում առանց կարերի դրման	1000
➤	Վերքերի առաջնային վիրաբուժական մշակում կարերի դրմամբ	4000
➤	Ականջի լվացում /մեկ դեպք /	1 500
➤	Օտար մարմնի հեռացում ականջից, քթից	1 500
2	ԱԱՊ հաստատությունում չհավաքագրված անձի համար	
➤	բժշկական խորհրդատվությունը / առաջնակի	2 000
➤	բժշկական խորհրդատվությունը / կրկնակի	1000
➤	բժշկական խորհրդատվությունը / բուժման նշանակումով	3500
➤	Ամբուլատոր հիվանդի մ/մ ներարկում հիվանդի դեղով ն/ե ներարկում հիվանդի դեղով ն/ե կաթիլային ներարկում հիվանդի դեղով	300 500 1 000
3	Առանց բժշկական ցուցումների և առանց համապատասխան ուղեգրման բժշկական լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ	
	Արյան ընդհանուր քննություն	1000
	Արյան մասնակի քննություն /Լեյկոցիտներ/	500
	Արյան մասնակի քննություն /Հեմոգլոբին/	500
	Գլյուկոզա պերիֆերիկ արյան մեջ/գլյուկոմետրիա/	400
	Գլյուկոզա երակային արյան մեջ	700
	Պրոթրոմբին	700
	Ռեումատոիդ գործոն	700
	Ց-ռեակտիվ սպիտակուց	700
	Ընդհանուր խոլեստերինի որոշում	700
	Մեզի ընդհանուր քննություն	700
	Էլեկտրասրտագրություն /ԷՍԳ/	2000

4	Ծառայությունները, որոնք ընդգրկված չեն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծավալներում և որոնք համար տվյալ ԱԱՊ բժշկական հաստատությունում պետական պատվեր տեղադրված չէ	
➤	յուրաքանչյուրը	1000
5	Չհիմնավորված տնային այց	3500
6	«ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 22-րդ հոդվածով և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 20-րդ հոդվածով ամրագրված բնակչության առանձին խմբերը (անձինք), որոնք Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 27-ի թիվ 347-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 15-ի թիվ 1089-Ն որոշումներին համապատասխան նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական (աշխատանքի ընթացքում) բժշկական զննությունները	Պայմանագրային
7	Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում չընդգրկված 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի բնակչության համար՝ տնային պայմաններում բժշկի նշանակմամբ բուժքրոջ կողմից կատարվող միջամտությունները	
➤	մ/մ ներարկում հիվանդի դեղով	400
➤	/ն/ե ներարկում հիվանդի դեղով	700
➤	/ն/ե կաթիլային ներարկում հիվանդի դեղով	1200
➤	այլ	1500
8	Տնային պայմաններում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ	չի իրականացվում
9	18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված անձանց համար առողջության տեղեկանքների/ տրամադրում	2000
10	Այն քաղաքացիների տնային կանչերը, որոնք գրանցված են այլ ԱԱՊ բժշկական հաստատություններում աշխատող ԱԱՊ բժշկի մոտ,	5000
11	Քաղաքացիների պահանջով արխիվային փաստաթղթերի տրամադրում	2 000

Ծանոթություն՝
 Ծառայության արժեք գնացուցակում չունենալու դեպքում որպես հիմք ընդունվում է նմանատիպ ծառայության համար ՀՀ ԱՆ կողմից հաստատված պետական պատվերի չափի գումարը:
 ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ Հիմքեր .
 1.22 առողջապահության նախարարի 2015 թ. ապրիլի 11-ի N 12-Ն հրաման՝ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԶԱՓՈՐՈՇԻԶԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝

2. ՀՀ առողջապահության նախարարի 2022 թ. հունիսի 13-ի N 40-Ն հրաման՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՅԼ
* ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԾԱՌԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 18 ՏԱՐԻՆ ԼՐԱՑԱԾ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝

<< ՇՆՈՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ >> ՀՈԱԿ տնօրեն՝

Հ.Առաքելյան

Կ.Տ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ք. Ալավերդի, Չորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ, N 131-Ն

**ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի
N 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, 34-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2023 թվականի բյուջեի մեջ կատարել փոփոխություններ.

Համայնքի վարչական բյուջեի եկամտային մասում փոփոխել
 • Փոխադրամիջոցների գույքահարկը պակասեցնել 64381.8 հազ. դրամ /900265121043/
 Հողերի վարձակալության գծով եկամուտները 4618.2 հազ. դրամ
 Այլ տեղական վճարների գծով եկամուտներ 10580.0 հազ. դրամ
 Վարչական իրավախախտումների համար եկամուտները 1650.0 հազ. դրամ
 Աղբահանության համար նախատեսված եկամուտները 10681.5 հազ. դրամ
 Համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայությունը 9500.0 հազ. դրամ

Բյուջեի ծախսային մասում փոփոխել.

- 1) 01-01-01 գործառնական դասակարգման նախահաշվի գումարը /կառավարման ապարատ/ 900262161038 պակասեցնել
- 4111 -/Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ /24000.0 հազ. դրամով (քսանչորս միլիոն):
- 4112- - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ-2600,0 հազ. դրամով (երկու միլիոն վեց հարյուր հազար):
- 4214 -Կապի ծառայություններ-1200,0 հազ. դրամով (մեկ միլիոն երկու հարյուր հազար):
- 4221-Ներքին գործուղումներ 550,0 հազ. դրամով (հինգ հարյուր հիսուն հազար):
- 4222-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր 2415,0 հազ. դրամով (երկու միլիոն չորս հարյուր տասնհինգ հազար):
- 4237-Ներկայացուցչական ծախսեր 1882,0 հազ. դրամով (մեկ միլիոն ութ հարյուր ութսուներկու հազար):
- 4251-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 600,0 հազ. դրամով (վեց հարյուր հազար):
- 4252-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում 1600,0 հազ. դրամով (մեկ միլիոն վեց հարյուր հազար):

- 4261-Գրասենյակային նյութեր և հագուստ 83,0 հազ. դրամով (ութսուներեք հազար):
- 4264-Տրանսպորտային նյութեր 1500,0 հազ. դրամով (մեկ միլիոն հինգ հարյուր հազար):
- 4267-Կենցաղային և հանրային սննդի նյութեր 59,0 հազ. դրամով (կենցաղային և հանրային սննդի նյութեր):
- 4823- -Պարտադիր վճարներ 400,0 հազ. դրամով (չորս հարյուր հազար):
- 2) .01-06-01 նախահաշվի /Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) 900262121057 գումարը պակասեցնել
- 4215-Ապահովագրական ծախսեր - 225,5 հազ. դրամով (երկու հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր):
- 4239-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4000,0 հազ. դրամով (չորս միլիոն):
- 4241-Մասնագիտական ծառայություններ 5005,0 հազ. դրամով (հինգ միլիոն հինգ հազար):
- 4252-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում 2200,0 հազ. դրամով (երկու միլիոն երկու հարյուր հազար):
- 4264-Տրանսպորտային նյութեր 3000,0 հազ. դրամով (երեք միլիոն):
- 4823- -Պարտադիր վճարներ 1100,0 հազ. դրամով (մեկ միլիոն մեկ հարյուր հազար):
- 3) 01-03-03 գործառնական դասակարգման նախահաշվի /Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ / 900262121248/4232 հոդվածի գումարը պակասեցնել 500,0 հազ. դրամով (հինգ հարյուր հազար):
- 4) 02-02-01 գործառնական դասակարգման նախահաշվի / Քաղաքացիական պաշտպանություն /4269 հոդվածի գումարը պակասեցնել 1000,0 հազ. դրամով (մեկ միլիոն):
- 5) 04-02-01 01 գործառնական դասակարգման/Գյուղատնտեսություն / նախահաշվի գումարը / 900262000814 պակասեցնել
- 4252-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում 2079,0 հազ. դրամով (երկու միլիոն յոթանասունհինգ հազար):
- 4264-Տրանսպորտային նյութեր 765,0 հազ. դրամով (յոթ հարյուր վաթսուհինգ հազար):
- 4269-Հատուկ նպատակային այլ նյութեր 356,00 հազ. դրամով (երեք հարյուր հիսունվեց հազար):
- 6) 04-05-01 գործառնական դասակարգման նախահաշվի / ճանապարհային տնտեսություն / 900262504021 4637 հոդվածի գումարը պակասեցնել 14680,0 հազ. դրամով (տասնչորս միլիոն վեց հարյուր ութսուն հազար):
- 7) 05-01-01 գործառնական դասակարգման նախահաշվի /աղբահանություն / 900262361018 4637 հոդվածի գումարը պակասեցնել 630,5 հազ. դրամով (վեց հարյուր երեսուն հազար հինգ հարյուր):
- 8) 05-06-01 գործառնական դասակարգման նախահաշվի/չրջակա միջավայրի պաշտպանություն/ 4241 հոդվածի գումարը պակասեցնել 630,5 հազ. դրամով (վեց հարյուր երեսուն հազար հինգ հարյուր):
- 9) 08-02-01 գործառնական դասակարգման /գրադարաններ/ նախահաշվի 900262000590 4637 հոդվածի գումարը / պակասեցնել 1500,0 հազ. դրամով (մեկ միլիոն հինգ հարյուր հազար):
- 10) 08-02-03 գործառնական դասակարգման /մշակույթի տներ, ակումբներ/ նախահաշվի 900262229033 4637 հոդվածի գումարը պակասեցնել 2675,5 հազ. դրամով (երկու միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար հինգ հարյուր):
- 11) 08-02-04 գործառնական դասակարգման /մշակույթային միջոցառումներ/ նախահաշվի 900262121123 գումարը պակասեցնել
- 4239-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 300,0 հազ. դրամով (երեք հարյուր հազար):
- 4269-հատուկ նպատակային այլ նյութեր -8000,0 հազ. դրամով (ութ միլիոն):
- 12) 08-03-01 գործառնական դասակարգման /հեռուստատադիտադորդումներ /նախահաշվի 4234 հոդվածի գումարը պակասեցնել 800,0 հազ. դրամով (ութ հարյուր հազար):
- 13) 09-04-01 գործառնական դասակարգման /Բարձրագույն մասնագիտական կրթություն/ նախահաշվի 4729 հոդվածի գումարը պակասեցնել 1940,0 հազ. դրամով (մեկ միլիոն ինը հարյուր քառասուն հազար):
- 14) 09-05-01 գործառնական դասակարգման / արտադպրցական դաստիարակություն/ նախահաշվի 4637 հոդվածի գումարը պակասեցնել 4000,0 հազ. դրամով (մեկ միլիոն):
- 15) 10-03-01 գործառնական դասակարգման նախահաշվի /հարազատին կորցրած անձ./ 4726 հոդվածի գումարը պակասեցնել 1230,0 հազ. դրամով (մեկ միլիոն երկու հարյուր երեսուն հազար):

16) 10-07-01 գործառնական դասակարգման նախահաշվի /սոց. օգնություններ./ 900262121623 4729 հողվածի գումարը պակասեցնել 1900,0 հազ. դրամով (երկու միլիոն):

17) 10-09-02 գործառնական դասակարգման նախահաշվի գումարը /աջակց. Հասարակ. Կազմակերպութ./ պակասեցնել 2000,0 հազ. դրամով():

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՐՄ	ԴԵՍ	ՁԵՆՆՊԱՅ
1.	ԴԱԿԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՍԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՍԱՐԳՍՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՋԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՉԿԻԼԻ			
8.	ԱՄՐԱՍՏԱՆ	ՋԱՆԻՆՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽԿԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԱՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՋԱԽԱՐՈԿ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ԴԱԿԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2023թ., դեկտեմբերի 26,
Լոռու մարզ, ք. Ալավերդի





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ք. Ալավերդի, Չորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ, N 132-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024
ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶՈՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 10, 11-րդ, 12-րդ, 13-րդ հոդվածների՝

համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի տարածքում 2024 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի տարածքում բոլոր տուրքերի և վճարների համար սահմանվում են դրույքաչափեր՝ ըստ համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի գոտիականության:
3. Տվյալ տարվա համար հաստատված տեղական տուրքի և վճարների դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:
4. Տեղական տուրքերը և վճարները վճարվում են Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 01-ից:





Որոշումն ընդունվեց.

ԿՈՐՄ

ԴԵՄ

ՁԵՈՆՊԱՅ

	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ	ԿՈՐՄ	ԴԵՄ	ՁԵՈՆՊԱՅ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՍԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			

5.	ՄԿՐՏԻՉ	ՍԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ԶԱԿԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԱՄՐԱՍՏԱՆ	ԶԱՆԻՆՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽԿԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԱՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ԶԱԽԱՐՈԿ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ԴԱԿԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ



2023թ., դեկտեմբերի 26,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝
26 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 132-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024
ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

Ալավերդի համայնքում ավագանու կողմից 2024 թ.-ի սահմանելու համար նախատեսվող տեղական տուրքերի դրույքաչափերը՝

Հ/Հ	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2024 թ.-ի համար սահմանված դրույքաչափը (ՀՀ դրամ) և կիրառվող գործակիցները
<p>1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝</p>		
Հիմնական շենքերի և շինությունների համար՝		
ա.	Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝	15 000 դրամ
բ.	Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) համար՝	
բա)	200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	30 000 դրամ
բբ)	501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	100 000 դրամ
բգ)	1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	200 000 դրամ
բդ)	3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	1 000 000 դրամ
Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝		
գ)	մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	5 000 դրամ
դ)	20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	10 000 դրամ
<p>Սույն կետի համաձայն՝ շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում Կառավարության որոշմամբ սահմանված շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող հետևյալ գործակիցները.</p>		

Գոտի
13-16
17-20

Գոտիականության գործակից
2.0
1.0

1.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների (բացառությամբ կառուցվող անհատական բնակելի տների, ինչպես նաև Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

ա. այլ շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

- 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակիցի արտադրյալը,

- 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակիցի արտադրյալը,

- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 400 հազար դրամի և շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակիցի արտադրյալը,

- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար երկու միլիոն դրամի հանրագումարի ու սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված՝ շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակիցի արտադրյալը.

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝

3 000 դրամ

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

<p>3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝</p>	<p>5 000 դրամ</p>
<p>4. Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում օրացուցային տարվա համար սահմանել՝</p>	
<p>4.1 Հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝</p>	<p>200 000 դրամ</p>
<p>4.2 Սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝</p>	<p>200 000 դրամ</p>
<p>4.3 Հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝</p>	<p>200 000 դրամ</p>
<p>5. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում օրացուցային տարվա համար՝</p>	
<p>5.1 Հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝</p>	<p>100 000 դրամ</p>
<p>5.2 Բնական գազի վաճառքի թույլտվության համար՝</p>	<p>100 000 դրամ</p>
<p>5.3 Հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝</p>	<p>100 000 դրամ</p>
<p>6. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտովազման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել՝</p>	<p>60 000 դրամ</p>
<p>7. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտովազման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել՝</p>	<p>20 000 դրամ</p>
<p>8.1 Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել՝</p>	<p>50 000 դրամ</p>
<p>9. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար տուրքը սահմանել՝</p>	
<p>ա) Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝</p>	
<p>- Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝</p>	<p>10 000 դրամ</p>
<p>- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝</p>	<p>12 000 դրամ</p>
<p>- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝</p>	<p>15 000 դրամ</p>

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	25 000 դրամ
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	30 000 դրամ
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	80 000 դրամ
բ) Օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	10 000 դրամ
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	12 000 դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	15 000 դրամ
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	25 000 դրամ
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	35 000 դրամ
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	80 000 դրամ

9-րդ կետի համար՝ ըստ բնակավայրերի գոտիականության, կիրառվում են ստորև բերված գործակիցները

Գոտի	Բնակավայրի անվանումը	Գործակից
13-14	բ. Ալավերդի	1,0
15	բ. Ալավերդի	0,75
16	բ. Ալավերդի, ք. Ախթալա	0,75
16	գ. Օձուն, գ. Աքորի	0,5
17	բ. Ալավերդի, ք. Շամլուղ,	
17	գ. Հաղպատ, գ. Շնող, գ. Թեղուտ, գ. Այգեհատ, գ. Ճոճկան, գ. Արեվածագ, գ. Մղարթ, գ. Ծաթեր	0,5
18	գ. Կաճաճկուտ, գ. Ծաղկաշատ, գ. Մեծ Այրում, գ. Նեղոց, գ. Հազվի, գ. Արդվի, գ. Կարմիր Աղել	0,3
19	գ. Զիլիզա	0,3
20	գ. Քարկուփ	0,3

10. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար սահմանել՝ 350 դրամ

11. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) **ժամը 24.00-ից** հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել՝

ա) Առևտրի օբյեկտների համար՝ Առևտրի օբյեկտների տեսակներն են՝ խանութները, կրպակները, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերը	30 000 դրամ
բ) Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝	50 000 դրամ

Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ

գ) Բաղնիքների (սաունաների) համար՝	200 000 դրամ
դ) Խաղատների համար՝	500 000 դրամ
ե) Շահումով խաղերի համար՝	300 000 դրամ
զ) Վիճակախաղերի համար՝	150 000 դրամ

11-րդ կետի համար՝ ըստ բնակավայրերի գոտիականության, կիրառվում են ստորև բերված գործակիցները

Գոտի	Բնակավայրի անվանումը	Գործակից
		1
13-14	ք. Ալավերդի	0,75
15	ք. Ալավերդի	0,75
16	ք. Ալավերդի, ք. Ախթալա	0,75
16	գ. Օձուն, գ. Աքորի	0,5
17	ք. Ալավերդի, ք. Շամլուղ,	
17	գ.Հաղպատ, գ.Շնող, գ.Թեղուտ, գ.Այգեհատ, գ.Ճոճկան, գ.Արեվածագ, գ.Մղարթ, գ.Ծաթեր	0,5
18	գ.Կաճաճկուտ, գ.Ծաղկաշատ, գ.Մեծ Այրում, գ.Նեղոց, գ.Հազվի, գ.Արդվի, գ.Կարմիր Աղեկ	0,3
19	գ. Զիլիզա	0,3
20	գ. Քարկուփ	0,3

12. Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը **յուրաքանչյուր եռամսյակի համար** սահմանվում է՝

ա) Հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	5 000 դրամ
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	10 000 դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	15 000 դրամ
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	20 000 դրամ
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	30 000 դրամ
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	50 000 դրամ

բ. Ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1 000 դրամ
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	2 000 դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	4 000 դրամ
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	8 000 դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝		15 000 դրամ
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝		25 000 դրամ
12-րդ կետի համար՝ ըստ բնակավայրերի գոտիականության, կիրառվում են ստորև բերված գործակիցները		
Գոտի	Բնակավայրի անվանումը	Գործակից
		1,0
13-14	ք. Ավավերդի	0,75
15	ք. Ավավերդի	0,75
16	ք. Ավավերդի, ք. Ախթալա	0,75
16	գ. Օձուն, գ. Աքորի	0,5
17	ք. Ավավերդի, ք. Շամլուղ,	
17	գ. Հաղպատ, գ. Շնող, գ. Թեղուտ, գ. Այգեհատ, գ. Ճոճկան, գ. Արեվածագ, գ. Մղարթ, գ. Ծաթեր	0,5
18	գ. Կաճաճկուտ, գ. Ծաղկաշատ, գ. Մեծ Այրում, գ. Նեղոց, գ. Հազվի, գ. Արդվի,	0,3
	գ. Կարմիր Աղեկ	
19	գ. Ջիլիզա	0,3
20	գ. Քարկոփ	0,3
13. Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝		5 000,0 դրամ
14. Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝		
	ա. ակոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	2000 դրամ
	բ. թունդ ակոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	3500 դրամ
	գ. սոցիալական գովազդի համար՝	0 դրամ
	դ. այլ արտաքին գովազդի համար՝	1500 դրամ
	ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի	25 %-ի չափով
	զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի	10 %-ի չափով
15. Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝		100 000 դրամ
16. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուս-ների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանել՝		10 000 դրամ

17. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ **օրացուցային տարվա** համար՝ 500 000 դրամ

18. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ **օրացուցային տարվա** համար՝

- ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 500 000 դրամ
- բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 000 000 դրամ
- գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7 000 000 դրամ
- դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10 000 000 դրամ

19. Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել՝ 100 000 դրամ

7 Փետրվարի 2024 թ.-ին փվյալ կեպը կորցնում է իր ուժը

20. Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

- ա. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (բացառությամբ հետտապարային ակումբների) համար՝ օրացուցային տարվա համար սահմանել՝ 20 000 դրամ
- բ. հետտապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում 150 000,0 դրամ

21. Համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տրվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում **ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ)** սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության մեկ քառակուսի մետրի համար սահմանել՝ 10 000 դրամ

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Ավավերդի համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 15 000 դրամ
2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 15 000 դրամ
3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել. 15 000 դրամ

<p>4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել.</p>	<p>5 000 դրամ</p>
<p>5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել.</p>	<p>15 000 դրամ</p>
<p>6. Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել.</p>	<p>3 000 դրամ</p>
<p>7. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում (Գլուխ 3, Հոդված 14).</p>	
<p>7.1 Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝</p>	
<p>7.1.1 Ալավերդի քաղաքում ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝</p>	<p>150 դրամ</p>
<p>7.1.2 Ալավերդի համայնքի /բացառությամբ Ալավերդի քաղաքի/ բնակավայրերում ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝</p>	<p>100 դրամ</p>
<p>7.1.3 Ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի 1 քմ մակերեսի համար</p>	<p>10 դրամ</p>
<p>7.2 Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.</p>	
<p>ա) Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝</p>	<p>50 դրամ</p>
<p>բ) Հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝</p>	<p>20 դրամ</p>
<p>գ) Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝</p>	<p>15,0 դրամ</p>
<p>դ) Գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝</p>	<p>5 դրամ</p>
<p>ե) Արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝</p>	<p>10 դրամ</p>
<p>զ) Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված, ինչպես նաև տարբերակված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու</p>	<p>50 դրամ</p>

դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված առավել բարձր դրույքաչափով.

է) Շինություններում (այդ թվում՝ առանձնացված, ինչպես նաև տարբերակված տընտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով:

50 դրամ

7.2.1 Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝

50 դրամ

7.2.2 Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

7.3 Ոչ բնակելի նպատակային նշանակության առնվազն 1000 քմ ընդհանուր մակերես գրադեցնող շենքերում և (կամ) շինություններում և շենքերից ու շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի վերաբերյալ 1.7 բաժնի 2-րդ մասի 1-5-րդ կետերով և 2.1-ին մասով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

- 1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3 000 դրամ
- 2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000 դրամ

7.3.1 - 7.3-րդ մասով սահմանված ոչ բնակելի շենքի և (կամ) շինության և (կամ) տարածքների մասով աղբահանության հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող և ստացող կողմերի միջև կնքված պայմանագրով: Ընդ որում, նշված շենքի, շինության և տարածքի սեփականատերը 7 բաժնի 2-րդ մասի 1-5-րդ կետերով և 2.1-ին մասով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության վերաբերյալ գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին

7.3.2 - 7.3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքում ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության և (կամ) տարածքի սեփականատերն է կազմակերպում ըստ զանգվածի կամ ծավալի աղբի հավաքման և հաշվարկման ապահովումը՝ 1.7 բաժնի 3-րդ մասով նախատեսված անձանց կողմից դրա ապահովման անհնարինության դեպքում: Ընդ որում, ըստ զանգվածի կամ ծավալի աղբի հավաքման դեպքում պետք է ապահովվեն աղբի հավաքման ու հեռացման՝ համայնքի ավագանու հաստատած կարգն ու պայմանները:

7.3.3 - 7.3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված կարգավորումները չեն կիրառվում սույն հոդվածի 7.3.2-րդ մասով սահմանվող ըստ զանգվածի կամ ծավալի աղբի հավաքման համար համապատասխան աղբամանների տեղադրման, ինչպես նաև աղբատար մեքենաների անարգել մուտքի ու ելքի անհնարինության դեպքերում:

8. Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի, ջրի վճար սահմանել **1 (մեկ) խորանարդ մետրի** համար

171 դրամ

-Շամլուղ բնակավայրի խմելու ջրի վճար սահմանել,

ա) առանց կոյուղու սպասարկման, 1 (մեկ) խորանարդ մետրի համար	120 դրամ
բ) առանց կոյուղու սպասարկման, 1 (մեկ) անձի համար	320 դրամ
գ) կոյուղու սպասարկումով, 1 (մեկ) խորանարդ մետրի համար	170 դրամ
դ) կոյուղու սպասարկումով, 1 (մեկ) անձի համար	380 դրամ
Շնոդ բնակավայրի խմելու ջրի վճար սահմանել՝ յուրաքանչյուր տնտեսության համար ամսական	500 դրամ

9. Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Զրոգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի ոռոգման ջրի վճար սահմանել.

0 - 500 մ ² մակերես ունեցող հողամասի համար	300 դրամ
501 - 1000 մ ² մակերես ունեցող հողամասի համար	500 դրամ
1001 - 2000 մ ² մակերես ունեցող հողամասի համար	1000 դրամ
2001 - 3000 մ ² մակերես ունեցող հողամասի համար	1 500 դրամ
3001 - 5000 մ ² մակերես ունեցող հողամասի համար	2 000 դրամ
5001 - 10000 մ ² մակերես ունեցող հողամասի համար	5 000 դրամ
10000 և ավելի մ ² մակերես ունեցող հողամասի համար	10 000 դրամ

10. Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով.

11. Ավավերդի համայնքի վարչական տարածքում համայնքային ենթակայության մանկապարտեզներում	
Ծնողական վճար մեկ ամսվա համար սահմանել՝	3 500 դրամ
Միակողմանի ծնողազուրկ երեխաների, մեկ ծնողի երկրորդ երեխայի հաճախելու դեպքում մեկ ամսվա համար սահմանել՝	2 000 դրամ
Երկկողմանի ծնողազուրկ երեխաների, զոհված կամ հաշմանդամ դարձած ազատամարտիկների երեխաների, ինչպես նաև մեկ ծնողի երեք և ավելի երեխայի հաճախման դեպքում մեկ ամսվա համար սահմանել՝	0 դրամ
